ՀՈՒՍՈ ԿԱՄՈՒՐՋ

Ծանր օրեր է ապրում արցախահայությունը: Տագնապալից օրեր, անվերջ սպասումներ, վիրավորվածություն, հուսախաբություն, նաև՝ սով... Վերջինս խորհրդային երկրում ժողովուրդների բարեկամության դրոշի ներքո հարևան «եղբայրական» հանրապետության կողմից մարզի շրջափակման արդյունքն է: Ասել է, թե 70 տարի եղել ենք ազատ կալանքում, հիմա էլ մեզ «հնազանդ չլինելու համար» մեկուսացրել են, կիրառում են պատժի ուժեղացված ռեժիմ:

Սով է Արցախում: Դա էլ արցախցիներին անաբեկելու հերթական քայլ է, տեսնես էլ ինչի կդիմեն մեր «եղբայրները» մեզ մեր տներից հանելու համար:

Ցանկանում են սովամահ անել մեզ, ծնկի բերել՝ չիմանալով, որ մի քանի ամիս չէ, մի քանի տարի էլ շրջափակեն, համաձայն ենք սովամահ լինելու, բայց ծնկի չենք գա, կպայքարենք մինչև... միացո՛ւմ:

Շրջափակում է: Ավարտվում են մարդկանց ուտելիքի վերջին պաշարները: Սննդամթերքի, առաջին անհրաժեշտության առարկաների խիստ պակաս է զգացվում նաև մրգառատ ու բերքառատ մեր գյուղում Վերին Հոռաթաղում (երաշտն էլ իր անելիքն է արել այս տարի):

Սպառվելու վրա է ալյուրը: Երկու ամսից ավելի նույնիսկ փոքր երեխաները զրկված են թեյ խմելու հնարավորությունից:

— Այս ինչ օրի հասանք, պատերազմական տարիներին գյուղը հացի պակաս չի զգացել, մեր հողը բարեբեր է, մեր ժողովուրդը՝ աշխատասեր, մեր պահեստները երբեք չեն դատարկվել, հիմա ի՞նչ պիտի անենք,— թոնթորում էին գյուղի ծերերը՝ չիմանալով, որ հիմա էլ չհայտարարված պատերազմի մեջ ենք: Ուղղակի մեր բոլոր թշնամիները չէ, որ բացահայտ են գործում: Առաջ բերքը տնօրինում էին գյուղացիները, ունեին աղացներ, լիքը պահեստներ, իսկ հիմա հանձնում են Աղդամի մթերակայան: Այնտեղ էլ քմահաճորեն են վերաբերվում դրա հետ. կուզեն կընդունեն, կուզեն չեն ընդունի:

Շրջափակում է... Չկա նաև բենզին, փակ են բոլոր ճանապարհները գյուղից, մարզից դուրս, իսկ ամբողջ մարզը մեզ պես խիստ կարիքի մեջ է:

Դասարան մտնելուց, դաս հարցնելուց առաջ, նայելով աշակերտների մտախոհ, դալուկ դեմքերին, հարցնում եմ որևէ բան կերե՞լ են, արդյոք, այդ օրը, գոնե թեյ խմե՞լ են, և քանի անգամ են արցունքոտվել աչքերս, երբ երեխաները պատասխանել են՝ ի՞նչ թեյ...

Ահա այսպիսի ծանր վիճակում էինք, երբ գյուղի վրա հոնդաց և մոտիկ դաշտում վայրէջք կատարեց սննդամթերքներով բեռնված մի ուղղաթիռ: Ամբողջ գյուղը շրջապատեց ուղղաթիռը: Կանայք լաց էին լինում, երեխաներն ուրախությունից թռչկոտում, չէ՞ որ ալյուր ու շաքարավազ էին ուղարկել...

Ուղղաթիռն ուղեկցել էր համագյուղացի, երկրաբանական արշավախմբի աշխատակից Ռաֆիկ Հովհաննեսի Սաժյանը: Նա, իմանալով Արցախում տիրող իրավիճակի մասին, իր և իր կոլեկտիվի ուժերով մթերքներ էր հասցրել գյուղ: Բոլորը սրտառուչ շնորհակալություն հայտնեցին Ռաֆիկին և նրա կոլեկտիվին, ամբողջ Հայաստանի ժողովրդին: Գիտենք, որ վիրավոր է, անչափ կարիքի մեջ է նաև մեր մայր Հայաստանը, բայց այդ նեղ վիճակում էլ օգնության ձեռք է մեկնում Արցախին: Ուրիշ էլ ինչի հետ կարելի է համեմատել այդ օգնությունը, եթե ոչ փլատակների տակ մնացած այն մոր վարմունքի հետ, որն իր մատները ծակելով արյունը խմեցրել էր երեխային և փրկել նրան մահից, կյանք պարգևել զավակին...

Ուղղաթիռի գյուղ գալը մարդկանց հոգում հուսո շող վառեց, հուսո կամուրջ գցեց Երևանից Վ. Հոռաթաղ...

Ի՞նչ կարելի է եզրակացնել. ինչքան էլ բարբաջեն բունիաթովները, ինքան էլ մեզ «աղվանացնեն», մենք մեկ հոգի, մեկ մարմին ենք, նույն արյունն է մեր երակներում: Մենք վաղուց միացել ենք հոգով, մնում է միայն թղթերի վրա վավերացվի այդ միացումը...

Նաիրա ԱՌՍՏԱՄՅԱՆ
ԼՂԻՄ, Մարտակերտի շրջան,
գ. Վ. Հոռաթաղ